



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում,  
նախագահող դատավոր՝ Ս.Մարարյան  
դատավորներ՝ Մ.Պապոյան  
Կ.Մարդանյան

1 նոյեմբերի 2024 թվական

ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝  
մասնակցությամբ դատավորներ՝

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ  
Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ  
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ  
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով Դավիթ Վլադիմիրի Առաքելյանի  
վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մարտի 30-ի  
որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի վճռաբեկ բողոքը,

## **Պ Ա Ր Զ Ե Ց**

### **Գործի դատավարական նախապատմությունը.**

1. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան)՝ 2008 թվականի հունիսի 11-ի դատավճռով Դավիթ Վլադիմիրի Առաքելյանը մեղավոր է ճանաչվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով, ու դատապարտվել ազատազրկման՝ 1 (մեկ) տարի 6 (վեց) ամիս ժամկետով: Նույն օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ՝ Դավիթ Առաքելյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան՝ 2 (երկու) տարի ժամկետով:

2. Առաջին ատյանի դատարանի նշված դատավճռի դեմ Դ.Առաքելյանի՝ դատական վերանայման բողոքով վարույթը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ կարճվել է:

3. ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 9-ի որոշմամբ վերադարձվել է՝ բողոքի պահանջը հստակեցնելու համար:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2008 թվականի հունիսի 11-ի դատավճռի դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի՝ հիմնարար խախտման հիմքով բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան)՝ 2021 թվականի մարտի 30-ի որոշմամբ մերժվել է:

5. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մարտի 30-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ ընդունվել է վարույթ<sup>1</sup>, և 2024 թվականի հունվարի 15-ի որոշմամբ սահմանվել է վճռաբեկ բողոքի քննության գրավոր ընթացակարգ:

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

<sup>1</sup> Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 8-րդ մասի, սույն բողոքը քննվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

6. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

6.1. Այսպես, բացառիկ վերանայման բողոքը մերժելու հիմքում դրված Վերաքննիչ դատարանի փաստարկներից՝ Առաջին աստիճանի դատարանի դատական ակտը նախկինում վերաքննության կարգով բողոքարկված լինելու կապակցությամբ բողոքի հեղինակը նշել է, որ հիմնարար խախտման հիմքով վերաքննիչ բողոքարկման ընթացակարգային այդ կանոնը միտված է ապահովելու համընդհանուր ճանաչում ստացած՝ *«դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը»* սկզբունքը և բովանդակային առումով նշանակում է ոչ թե բողոք ներկայացված, այլ բողոքի ըստ էության քննության արդյունքում վերջնական դատական ակտ կայացված լինելը: Բողոքաբերը փաստել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2008 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ բողոքն ըստ էության քննության առարկա չի դարձրել, և այն, որ հիմնարար խախտման հիմքով բողոքի քննության իրավասությունը վերապահված է Վերաքննիչ դատարանին, բխում է նաև բողոքը վերադարձնելու մասին Վճռաբեկ դատարանի որոշման բովանդակությունից:

6.2. Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ կարճվել է Դ.Առաքելյանի՝ դատական վերանայման բողոքով վարույթը, ընդ որում՝ այդ ու ՀՀ գլխավոր դատախազի ներկայացված բողոքները նույնաբնույթ չեն, իսկ վերադատության կարգով բողոքարկված չլինելու պահանջը նպատակ է հետապնդում բացառելու նույն դատարանի կողմից նույնաբովանդակ բողոքի կրկնակի քննությունը:

6.3. Վերոգրյալի հետ մեկտեղ բողոքի հեղինակը փաստել է, որ Վերաքննիչ դատարանն իր 2021 թվականի մարտի 31-ի դատական ակտը հիմնավորելու նպատակով հղում է կատարել *«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»* եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածին: Բողոքաբերն ընդգծել է, որ տվյալ դեպքում վերաքննիչ բողոքը ներկայացված էր հիմնարար խախտման հիմքով՝ ի շահ Դ.Առաքելյանի, իսկ նշված հոդվածի 2-րդ կետը հստակորեն թույլատրում է հիմնարար խախտման հիմքով նորոգել գործի վարույթը:

6.4. Վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրված մյուս՝ Վճռաբեկ դատարանի որոշումները հետադարձության կարգով կիրառելու վերաբերյալ փաստարկը, ըստ բողոքի հեղինակի, հիմնավոր չէ, քանի որ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներն իրավաստեղծ գործունեության արդյունքում սահմանված պարտադիր կատարման ենթակա վարքագծի կանոններ չեն, այսինքն, Վճռաբեկ դատարանը ոչ թե սահմանում է նոր նորմատիվ իրավական ակտ կամ վարքագծի կանոն, այլ տալիս է արդեն իսկ գոյություն ունեցող իրավական նորմի կիրառման, դրա մեկնաբանության չափանիշներ:

6.5. Բողոք բերած անձն անդրադարձ է կատարել նաև Դ.Առաքելյանին մեղսագրված հանցանքը կատարելու մեջ նրա մեղավորության հարցին և գործի փաստական հանգամանքների վերլուծությամբ եզրահանգել, որ նախորդ դատաքննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

7. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել ու փոփոխել Վերաքննիչ դատարանի՝ 2020 թվականի մարտի 30-ի որոշումը՝ ճանաչելով և հռչակելով Դ.Առաքելյանի անմեղությունը մեղսագրված արարքում:

### **Ստորադաս դատարանների իրավական դիրքորոշումները.**

8. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2008 թվականի հուլիսի 31-ի որոշմամբ Դ.Առաքելյանի՝ դատական վերանայման բողոքով վարույթը կարճվել է՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) Իր շահերի պաշտպանության համար բերված բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանում գործի քննությանն ամբաստանյալ Դ.Առաքելյանի՝ մի քանի անգամ անհարգելի չնեղկայանալը Վերաքննիչ քրեական դատարանը դիտում է որպես բողոքից հրաժարում և բողոքը հետ վերցնել»<sup>2</sup>:

9. Վերաքննիչ դատարանի՝ 2021 թվականի մարտի 30-ի որոշման համաձայն՝ «(...) [Բ]ողոքաբերի կողմից չի պահպանվել ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՈ-1431 որոշման մեջ սահմանված այն պահանջը,

<sup>2</sup> Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթ 101:

որ «օրինական ուժի մեջ մտնած առաջին արյանի դարարանի գործն ըստ էության լուծող դարական ակտը հիմնարար խախտման հիմքով վերաքննիչ արյանի կողմից կարող է վերանայվել, եթե այն նախկինում չի բողոքարկվել վերադասության կարգով», քանի որ գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ բողոքարկված դարավճիռը դեռևս 10.07.2008 թվականին ամբաստանյալի կողմից գրեթե սույն հիմքերով ու հիմնավորումներով բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դարարան, որը 24.07.2008 թվականին ընդունվել է դարարանի վարույթ (...) և 29.07.2008 թվականին նշանակվել դարական նիստում քննության:

Դարական նիստը չի կայացել ամբաստանյալի չներկայանալու պատճառով, որպիսի հանգամանքը հաշվի առնելով դարարանը նիստը հետաձգել և նշանակել է 31.07.2008 թվականին:

31.07.2008 թվականին ևս ամբաստանյալը չի ներկայացել դարական նիստին, որպիսի հանգամանքը վերաքննիչ դարարանը գնահատել է որպես բողոքից հրաժարում և որոշում է կայացրել վերաքննիչ վարույթը կարճելու մասին:

Այս տեսանկյունից առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ ՀՀ վերաքննիչ քրեական դարարանի 31.07.2008 թվականի վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշման դեմ ՀՀ գլխավոր դարախազի կողմից դեռևս 01.11.2019 թվականին հիմնարար խախտման հիմքով (գրեթե ամբողջությամբ համընկնում է սույն բողոքին) ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը, սակայն, ՀՀ Վճռաբեկ դարարանի՝ 09.12.2019 թվականի որոշմամբ վերադարձվել է, (...) որից հետո, սակայն ՀՀ գլխավոր դարախազի կողմից կրկին բողոք չի ներկայացվել և դրա ուժով բողոքը համարվել է չգրված:

Վերաքննիչ դարարանի գնահատմամբ վերոգրյալն ինքնին բավարար է փաստելու, որ սույն բողոքը չի կարող բավարարվել և հիմք հանդիսանալ բողոքարկված դարավճիռը վերանայելու համար, քանի որ այն արդեն իսկ բողոքարկվել է և դրա առթիվ առկա է Վերաքննիչ դարարանի, այնուհետև ՀՀ Վճռաբեկ դարարանի օրինական ուժի մեջ մտնած որոշում:

(...) [Ե]թե այդուհանդերձ ելնենք այն գաղափարից, որ ամբաստանյալի՝ դեռևս 10.07.2008 թվականին ներկայացված վերաքննիչ բողոքն ըստ էության քննության առարկա չի դարձվել վերաքննիչ դարարանի կողմից, հետևաբար ՀՀ Սահմանադրական դարարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՄԴՈ-1431

որոշմամբ սահմանած չափանիշը (...) պահպանված է, քանի որ խոսքը զուր բողոքարկման մասին չպետք է լինի, այլ այդ բողոքի քննության և դրա արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից վերջնական դատական ակտի առկայության, ապա միևնույն է սույն բողոքը չի կարող բավարարվել:

Վերաքննիչ դատարանի նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ (...) բողոքաբերը «դատավարական օրենքի հիմնարար խախտում» հասկացության ներքո փաստացի բարձրացրել է զուր ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներին հետադարձ ուժ տալու կամ դրանցում տրված քրեաիրավական և քրեադատավարական նորմերի լույսի ներքո նախկինում կայացված, ուժի մեջ մտնող և կատարված դատավճիռը վերանայելու հարց:

(...) Գործող իրավական համակարգում ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների իրավական բնույթի և գործողության ժամանակի առումով առկա իրավակարգավորումներից հետևում է, որ դրանք վերաբերում են հիմնականում սպազային և ունեն որոշակի պարտադիրություն սպազայում կայացվելիք դատավճիռների և որոշումների համար:

Վերաքննիչ դատարանի այս հետևությունն ուղղակիորեն թխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածից, որում հստակ սահմանված է, որ՝

(1) յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ, որպես իրավական փաստարկ, իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի (այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի)՝ օրինական ուժի մեջ մտնող դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները, իսկ դատարանը պարտավոր է անդրադառնալ այդ փաստարկներին,

(2) նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը ((...) [Թ]են ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներն ուղղված են սպազային, սակայն այդ առումով ևս չունեն ինպերտիվ բնույթ և դատարաններն իրավունք ունեն պարճառաբանված կերպով չկիրառել ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում պարունակող

մեկնաբանությունները, որպիսի հանգամանքը վկայում է այն մասին, որ այդ որոշումներն առավել ևս չեն կարող ինկերարիվ բնույթ ունենալ նախկինում կայացված դարավճիռների և որոշումների վերանայման համար):

Վերոգրյալի հիման վրա անվիճելի է այն փաստը, որ օրենքի փեսանկյունից ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները պարտադիր (պարտադիր լինելը պայմանական է օգրագործվում, քանի որ դատարանն իրավունքի ունի շեղվել նույնանման փաստերով այլ գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմին փրված մեկնաբանությունից, սակայն պայմանով, որ հիմնավորի օրենքի և այլ նորմարիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը) բնույթ են կրում ապագայում կայացվելիք դարավճիռների և որոշումների համար և նախկինում կայացված դարավճիռների և որոշումների վերանայման համար հիմք չեն կարող հանդիսանալ, հետևաբար նաև հետադարձության կարգով չեն կարող կիրառվել: Հսկառակ մեկնաբանությունը կարող է հանգեցնել այնպիսի վիճակի, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից ցանկացած նոր մեկնաբանություն կարող է պարտադիր համարվել մինչ այդ մեկնաբանությունն այդ նույն նորմերի հիման վրա կայացված և օրինական ուժի մեջ մտած դարավճիռների վերանայման համար, որպիսի հանգամանքը կարող է վրանգել իրավական համակարգի կայունությունը և խաթարել իրավական անվրանգությունն՝ առաջացնելով մի շարք քաղաքական հետևանքներ. իրավական անորոշություն, իրավակիրառական կամայականություն, խտրական և անհավասար վերաբերմունք մարդու իրավունքների նկատմամբ և այլն:

Վերաքննիչ դատարանի մտրեցումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ եթե օրենսդիրը նպատակ ունենար ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներին և/կամ դրանցում արտահայտած իրավական դիրքորոշումներին հետադարձ ուժ փայ, ապա այն կարող էր անել օրենսդրական այլ կառուցակարգերով, օրինակ, ինչպես ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումների պարագայում, դիրարկելով դրանք որպես նոր հանգամանք (426.4-րդ հոդված, մաս 1-ին, կեր 1-ին) և այդ հիմքով դատական ակտի վերանայման հիմք, կամ սահմանելով, որ դրանք փարածվում են մինչև այդ որոշումների ընդունմանը նախորդող ժամանակահատվածում կայացված և ուժի մեջ մտած դատական ակտերի նկատմամբ և այլն:

Մինչդեռ օրենսդիրը նման կանոններ չի սահմանել, ինչը նշանակում է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը չի կարող ոչ նոր հանգամանքի դեր կատարել, ոչ էլ հետադարձություն ունենալ: (...) Դրանով պայմանավորված՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նախկինում կայացված դատավճիռները դրանց ուժի մեջ մտնելուց և կատարվելուց հետո կայացված ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա վերանայելն ոչ միայն իրավաչափ չի կարող լինել, այլև վրանգավոր է իրավական հետևանքների տեսանկյունից:

Վերաքննիչ դատարանի նման մտրեցման հիմնավորման մեկ այլ փաստարկ է այն, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը և/կամ դրանում փրված մեկնարանությունը չի հանդիսանում նաև քրեադատարարական օրենսդրության մաս, քանի որ [ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածը հստակ սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության փարածքում քրեական գործերով վարույթի կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, քրեական դատավարության օրենսգրքով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: (...)]<sup>3</sup>:

### **Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.**

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Վերաքննիչ դատարանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը մերժելու մասին հետևությունը:

11. Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ոչ ոք չպետք է միևնույն պետության իրավագրության շրջանակներում երկրորդ անգամ դատվի կամ քրեական դատավարության կարգով պարժվի այն հանցագործության կապակցությամբ, որի համար նա արդեն վերջնականապես արդարացվել է կամ դատապարտվել այդ պետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան:

<sup>3</sup> Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, թերթ 79-89:



2. Նախորդ կետի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը փոխապետության օրենքին և քրեական դատավարությանը համապատասխան, եթե (...) նախորդ քննության ժամանակ տեղ են գրել էական թերություններ, որոնք կարող էին ազդել դրա արդյունքի վրա: (...)»:

11.1. Այսպես՝ իրավունքի գերակայության վրա հիմնված պետությանը ներհատուկ է իրավական որոշակիության պահանջը, որի առանցքային բաղադրատարրերից մեկը դատական ակտերի կայունության կամ *res judicata* սկզբունքն է. իրավական կարգադրագրերի կայունության, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի անփոփոխելիության ու վերջնական լինելու, դրանց համընդհանուր պարտադիրության գաղափարը, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև դատարանների հեղինակությունը և վստահությունը դատական իշխանության նկատմամբ<sup>4</sup>: Ընդամին, Եվրոպական կոնվենցիան քրեական գործերով իրավական որոշակիության սկզբունքի կիրառման որոշակի սահմանափակումներ է դնում: Այս հարցում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) իր նախադեպային իրավունքում բազմիցս ընդգծել է, որ իրավական որոշակիության պահանջները բացարձակ չեն, և քրեական գործերով դրանք պետք է գնահատվեն թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո, ինչը հստակորեն թույլատրում է վերաբացել գործը, երբ տեղ են գտել վարույթի էական թերություններ<sup>5</sup>:

12. Կոնվենցիոն նշված դրույթն իր ամբողջական արտացոլումն է գտել 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք) 21-րդ հոդվածի 6-րդ մասում, որի իրավակարգավորման տրամաբանական դրսևորումն է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, որի համաձայն՝ «[Ա]ռաջին արյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի

<sup>4</sup> Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ Մելիք Մեսրոպյանի գործով 2021 թվականի հունիսի 11-ի թիվ ԵԷՆ/0040/01/12 որոշման 11.1-րդ և 13-րդ կետերը:

<sup>5</sup> Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով 2019 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 54012/10, կետ 129:

այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը»:

12.1. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ հիմնարար խախտման հիմքով վերաքննության կարգով վերանայման օրենսդրական կարգավորումներին վերաբերող թիվ ՍԴՈ-1431 որոշման շրջանակներում ՀՀ Սահմանադրական դատարանը շեշտել է, որ օրինական ուժի մեջ մտած առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտը վերոհիշյալ հիմքով վերաքննիչ ատյանի կողմից կարող է վերանայվել, եթե այն **նախկինում չի բողոքարկվել վերադատության կարգով**<sup>6</sup>: Այս առումով հարկ է նկատել, որ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ ամրագրված այս պահանջը կոչված է բացառելու Վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտի կրկնակի ստուգումը՝ նույնիսկ օրենքով սահմանված հատուկ հանգամանքների առկայության դեպքում: Ուստի, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ընթացակարգային այսօրինակ պահանջի պահպանումը պետք է գնահատվի՝ հաշվի առնելով բողոքի կապակցությամբ կայացված դատական ակտի իրավական բնույթը:

13. Տվյալ պարագայում, պարզելու համար, թե արդյո՞ք առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ դատական ակտը նախկինում բողոքարկվել է վերաքննության կարգով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաբերելի մասով (*mutatis mutandis*) պետք է կիրառելի լինեն Եվրոպական կոնվենցիային կից թիվ 7 արձանագրության 4-րդ հոդվածում օգտագործվող «արդարացվել է կամ դատապարտվել» հասկացության բովանդակության բացահայտման շրջանակում Եվրոպական դատարանի արտահայտած հետևյալ իրավական դիրքորոշումները.

- որոշումն իբրև «արդարացնող» կամ «դատապարտող» դիտարկելու համար, պետք է հաշվի առնվի տվյալ որոշման բուն բովանդակությունը և գնահատվի դրա ազդեցությունը գանգատաբերի կարգավիճակի վրա,

- «արդարացված կամ դատապարտված» բառերի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ամբաստանյալի քրեական

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՍԴՈ-1431 որոշման 4.3-րդ կետը:

պատասխանատվության հարցը լուծվել է՝ հիմնվելով գործի բոլոր հանգամանքների գնահատման վրա, այլ կերպ ասած, տեղի է ունցել գործի ըստ էության քննություն<sup>7</sup>:

13.1. Եվրոպական դատարանի նշված մոտեցման հաշվառմամբ՝ գնահատելով ՀՀ Սահմանադրական դատարանի մշակած չափորոշիչը, և հաշվի առնելով քրեական արդարադատության համակարգում վերաքննության՝ որպես փաստի հիմքով վերանայման դերը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկված լինելու եզրահանգման համար վերաքննիչ դատարանի կողմից կայացված ցանկացած դատական ակտի առկայությունը բավարար չէ. յուրաքանչյուր դեպքում, պետք է պարզել թե արդյո՞ք բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերաքննիչ դատարանում ստուգման է ենթարկվել քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման ու քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, այլ կերպ՝ արդյոք տեղի է ունեցել վերաքննիչ բողոքի ըստ էության քննության արդյունքում ստորադաս դատարանի դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգում:

14. Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դ.Առաքելյանի՝ դատական վերանայման բողոքով վարույթը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ կարճվել է՝ այն պատճառաբանությամբ, որ բողոք բերած անձը հետամուտ չի եղել վերաքննիչ դատարանում իր բողոքի քննությանը<sup>8</sup>: Վերոնշյալ փաստերի վերլուծությունից բխում է, որ վարույթը կարճելու մասին որոշումը հիմնված չի եղել Առաջին ատյանի դատարանի՝ վիճարկվող դատական ակտի իրավաչափության քննության արդյունքում արված եզրահանգումների վրա: Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարույթը կարճելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտը հիմնված չի եղել գործի փաստական հանգամանքների բացահայտման ու քրեական օրենքի կիրառման ճշտության, գործը քննելիս ու լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջները պահպանված լինելու

<sup>7</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Mihalache v. Romania* գործով հիշյալ վճիռը, կետեր 95 և 97:

<sup>8</sup> Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

կապակցությամբ արված որևէ եզրահանգման վրա, և չի հանգեցնում այն հետևությանը, որ ստուգման է ենթարկվել Առաջին ատյանի դատարանի՝ վիճարկվող դատական ակտի իրավաչափությունը:

14.1. Հետևաբար, վերոշարադրյալը հիմք է տալիս եզրահանգելու, որ Առաջին ատյանի դատարանի դատավճռի իրավաչափությունը նախկինում վերաքննության կարգով ստուգման չի ենթարկվել: Ուստի, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշման անկայությունը հիմք չէ արձանագրելու, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը՝ մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելը, բողոքարկվել է վերաքննության կարգով:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի փաստարկին առ այն, որ սույն գործով առկա է նաև վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում, ապա հարկ է նշել, որ նշված որոշումը կայացնելիս Վճռաբեկ դատարանը չի իրականացնում բողոքում նշված հիմքերի բովանդակային քննարկում<sup>9</sup>:

15. Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի փաստարկն առ այն, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը բողոքարկվել է, և առկա են Վերաքննիչ ու Վճռաբեկ դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր, իրավաչափ չէ, քանի որ, ինչպես նշվեց, թե վերաքննիչ և թե վճռաբեկ բողոքների հիման վրա բողոքարկվող դատական ակտի ըստ էության վերանայում չի իրականացվել:

16. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից հիմնարար խախտման հիմքով դատական վերանայման բողոքը մերժելու հիմքում դրված նաև այն պատճառարանությանը, որ Վճռաբեկ դատարանի որոշմամբ իրավական նորմին տրված մեկնաբանությունները հիմք չեն օրինական ուժ ստացած դատական ակտը վերանայելու համար, որ այդպիսիք իմպերատիվ նշանակություն չունեն և որ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները կիրառելի են հետագայում կայացվելիք դատական ակտերի դեպքում, քանի որ օրենսդիրը չի նախատեսել Վճռաբեկ դատարանի մեկնաբանություններին հետադարձ ուժ տալու հնարավորություն<sup>10</sup>, ապա Վճռաբեկ դատարանը, համաձայնելով Վերաքննիչ

<sup>9</sup> Բողոքը վերադարձնելու մասին որոշման իրավական բնույթի մասին մասնաբանման տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 18-ի թիվ ՍԴՈ-1363 որոշման 7-րդ կետը:

<sup>10</sup> Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

դատարանի այն եզրահանգմանը, որ Վճռաբեկ դատարանի որոշմամբ իրավական նորմին տրված մեկնաբանությունները բացառիկ վերանայման բողոք բերելու և բացառիկ վերանայման վարույթ հարուցելու ինքնավար հիմք չեն, այդուհանդերձ, փաստում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանը ճիշտ չի գնահատել այն հանգամանքը, որ Առաջին աստիճանի դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի դեմ բացառիկ վերանայման բողոք բերվել է ոչ թե Վճռաբեկ դատարանի որոշմամբ իրավական նորմին տրված մեկնաբանության, այլ հիմնարար խախտման հիմքով: Տվյալ պարագայում Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները վկայակոչվել են որպես հիմնարար խախտման առկայությունը հիմնավորող իրավական փաստարկ, որը կարող էր հաշվի առնվել Վերաքննիչ դատարանի կողմից: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի կողմից Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները հիմնարար խախտման առկայության փաստը գնահատելիս հաշվի առնելը չի նույնանում Վճռաբեկ դատարանի որոշմանը հետադարձ ուժ տալու հետ: Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո հիմնարար խախտման փաստն արձանագրելու և օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայելու արդյունքում կարող են վերացվել մարդու իրավունքների և ազատությունների հնարավոր հիմնարար խախտումները:

16.1. Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն դիտարկմանը, ըստ որի՝ քննարկվող հարցի համատեքստում առաջադրվող մոտեցումն անվիճելի է օրենսդրական կարգավորումների տեսանկյունից, ապա հարկ է նկատել, որ այդպիսի մոտեցման ոչ միանշանակ լինելն ուղղակիորեն արտահայտվում է հենց վերաքննիչ դատարանի իրավակիրառ պրակտիկայում: Մասնավորապես՝ վերաքննիչ դատարանը մի շարք գործերով ըստ էության քննության է առել հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքներ՝ հաշվի առնելով նաև իրավական նորմին Վճռաբեկ դատարանի կողմից տրված մեկնաբանությունները, որոնք ձևավորվել էին վիճարկված դատական ակտերն օրինական ուժի մեջ մտնելուց հետո<sup>11</sup>:

<sup>11</sup> Տե՛ս օրինակ՝ Վերաքննիչ դատարանի՝ թիվ ԵԿԴ/0064/01/08, ԵԿԴ/0088/01/08, ԵԿԴ0058/01/08 և ԵԿԴ/0074/01/08 գործերով համապատասխանաբար՝ 2020 թվականի փետրվարի 24-ի, 2022 թվականի մարտի 24-ի, 2022 թվականի մայիսի 31-ի ու 2022 թվականի հունիսի 7-ի որոշումները:

17. Այսպիսով, վերոշարադրյալի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի՝ հիմնարար խախտման հիմքով ներկայացված բողոքը մերժելու մասին հետևությունը, հիմնավոր չէ:

17.1. Ինչ վերաբերում սույն որոշման 6.5-րդ կետում շարադրված բողոքաբերի այն փաստարկին, որ նախորդ դատաքննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը, ապա հարկ է նշել, որ Առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռը հիմնարար խախտման հիմքով վերանայելու իրավասությունը վերապահված է Վերաքննիչ դատարանին, տվյալ դեպքում վիճարկվող դատական ակտում բողոքի հեղինակի այդ փաստարկը քննարկման առարկա չի դարձվել, ուստի, ելնելով դատական վերանայման ծավալի վերընթաց նվազման սկզբունքից՝ Վճռաբեկ դատարանը զրկված է այդ փաստարկին անդրադառնալու հնարավորությունից:

18. Անփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական ակտ կայացնելիս, Վերաքննիչ դատարանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում, այն է՝ սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածը, 376.1-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, որն իր բնույթով էական է և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի հիման վրա հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու ու գործը Վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նոր քննության ընթացքում Վերաքննիչ դատարանը պետք է վերացնի սույն որոշմամբ արձանագրված խախտումները և հանգի համապատասխան հետևության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 43-րդ, 361.1-րդ, 415.1-րդ, 418.1-րդ, 419-րդ, 422-423-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դավիթ Վլադիմիրի Առաքելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2021 թվականի մարտի 30-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ \_\_\_\_\_ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ \_\_\_\_\_ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

\_\_\_\_\_ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

\_\_\_\_\_ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ